

1964-ի Յունուարին դէպի Սուրբ Երկիր կատարած իր այցելութեան առաջին տարեդարձին առիթով, Ն. Ս. Պօղոս Զ. Պապ հետեւեալ հեռագիրը յղած է Պատրիարք Ս. Հօր.—

5 Յունուար 1965, Վատիկան

Ն. Ամենապատուութիւն
Եզիշէ Արքեպս. Տէրտէրեան,
Պատրիարք Հայ Երուսաղէմի.

Սուրբ Երկիր մեր կատարած ուխտագնացութեան տարեդարձը կը վերակենդանացնէ մեր յիշողութեան մէջ Նախահմարտութեան շնորհիւ Զերդ Ամենապատուութեան հետ ունեցած մեր երջանիկ հանդիպումին յիշատակը։ Այս առթիւ կ'օգտուիմք սուրբ տարիէն՝ նորոգելու մեր քերականնդ ուխտը։

ՊՕՂՈՍ Զ.

Նոյն առիթով, Պապական Նուիրակ Մօնա. Լ. Զանիէի Ն. Ամենապատուութեան յանձնեց Ն. Ս. Պապին կողմէ՛ն Երուսաղէմի ակաճակութեան լանջախաչ մը, հետեւեալ նամակով.—

4 Յունուար 1965, Երուսաղէմ.

Ն. Ամենապատուութիւն
Եզիշէ Արքեպս. Տէրտէրեան,
Հայ Առաքելապետ Պատրիարք,
Երուսաղէմ.

Նորին Ամենապատուութիւն,

Հանդիմանում եմ ձեր հաղորդելու Զերդ Ամենապատուութեան, թէ Ն. Սրբոյն Պօղոս Զ. Պապը, դէպի Սուրբ Երկիր կատարած իր քերականնդ ուխտագնացութեան ամառահանալի յիշատակներուն և Զերդ Ամենապատուութեան հետ 4 Յունուար 1964-ին իր ունեցած հանդիպումին առիթով, ինծի պարտականութիւն յանձնած է իր կողմէ Զեզի յանձնել լանջախաչ մը։

Մեծապէս երջանիկ եմ Զերդ Ամենապատուութեան փոխանցելու եղբայրական սիրոյ և Զեր յարգելի անձին մկատմամբ Ս. Հօր տածած համակրանքին այս նոր վկայութիւնը։

Կատարելով այս հանելի պարտականութիւնը, կ'ազօթեմ առ «Մայր Եկեղեցոյ» Կոյը՝ որ Քրիստոսի ողորմութիւնը միշտ փարատէ ամէն տեսակի ստուեր, շարունակել կարենալու համար այն խօսակցութիւնը՝ որ այնքան յայտնի էր Երուսաղէմի քաղաքին և Երուսաղէմի քաղաքին։

Այս բարեպատեհ առիթով, անգամ մը եւս Զերդ Ամենապատուութեան կը ներկայացնեմ ամենէն անկեղծ գգնամբեր և քերք սէր ի Քրիստոս։

ԼԻՆՕ ԶԱՆԻՆԻ

ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ